մանէ, լռել կարէ յերկիր՝ այնքանելի անիրաւութիւնք անցանելով 'ի մէջ, մինչև շաղախեցաւ երկիր 'ի արենէ արդարոց անպարտից, և դրունք երկնից զզուեցան 'ի բախմանէ աղաչանաց սրբոց արեանց տնանկաց և զրկեցելոց, մինչև յարեաւ բարկութիւն Տեառն 'ի վերայ մեր և բառնցաւ խնամս իւր 'ի յերկրէ մերմէ. մատնեցաւ երկիր և անկաւ ինքնակալ իշխանութիւնն և կորեաւ և ցրուեցան իշխանքն՝ մնալով գառինքն անմեղս 'ի բերանս գիշատօղ գայլեաց մինչև ցայսօր, այլ յուսամ 'ի Տէր, զի մնացորդ գառինքս ըստ սահմանի Օրինաց լցուցանեն տեղի անկելոց նախնեաց մերոց բարեպաշտ սերնդօք, արդ՝ հարցանեմ զքեզ ընթերցօղ ասայ ինձ բարեկամ՝ եթէ կամիս կրկին ընդունիլ այդպիսի սարսափելի տէրութիւնն, որում շահաւէտութիւնն բարձրացաւ միմիայն մինչև ցդարշապարն, այլ Ցնասն Էհաս մինչև 'ի գլուխ. ուրեմն քաւ մի՛ լիցի և մի՛ լիցուք մեք կրկին փորձող բանին հաւաստի տեսելոյ, և փորձեցեալ իրացն իբրև յիմար, այլ Ջանասցուք փրկել 'ի մէջ իշխանացս մեր 'ի խրզճմտանաց և տալոյ նոցա պատասխան վասն ամբարշտութեան ինքնակամ արարմանց իւրեանց առաջի ատենի ահեղ դատաւորին 'ի հանդերձեալումն, և աղաչեսցուք բոլոր ժողովուրդն 'ի ծառայութենէ և 'ի ձեռանէ յառնէ անիրաւէ և 'ի կամաց միոյ ինքնակամ և ինքնակալ բարբարոսէ,